

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2024 թվականին քրեակատարողական հիմնարկներում խրախուսանքի միջոցների և կարգապահական տույժերի կիրառման պրակտիկայի վերաբերյալ

Իրավական նախաձեռնությունների կենտրոնն ուսումնասիրել է կալանավորված անձանց և դատապարտյալներին 2024 թվականին տրամադրված խրախուսանքների և կարգապահական տույժերի պրակտիկան: Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ կալանավորված անձանց 2024 թվականի ընթացքում խրախուսանք չի տրամադրվել: Դատապարտյալներին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 14 խրախուսանք:

- 5 շնորհակալություն, որից 3-ը՝ «Սևան» ՔԿՀ-ում, իսկ մյուս 2-ը՝ «Արթիկ» և «Արմավիր» ՔԿՀ-ներում,
- 2 լրացուցիչ երկարատև կամ կարճատև տեսակցություն «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում,
- Տեսազանգից լրացուցիչ օգտվելու 4 թույլտվություն «Արմավիր» ՔԿՀ-ում,
- Նախկինում նշանակված 3 տույժի վաղաժամկետ հանում «Արմավիր», «Արթիկ» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում:

Նշված խրախուսանքի միջոցների վերաբերյալ որոշումները չեն բողոքարկվել: Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության կողմից խրախուսանքի որոշումը վերանայելու վերաբերյալ 1 միջնորդություն է ներկայացվել, որը բավարարվել է, և խրախուսանք տրամադրելու վերաբերյալ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի կայացրած որոշումն անվավեր է ճանաչվել: Նշված վարչության կողմից «Վանաձոր» ՔԿՀ-ում խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ կայացված որոշումը վերանայելու միջնորդություն է ներկայացվել 2025 թվականին, որը ներկայումս քննարկման փուլում է: Դրական ենք գնահատում այն, որ նախորդ տարիների համեմատ հաշվետու ժամանակահատվածում էականորեն նվազել են խրախուսանքի որոշումները կասեցնելու կամ վերանայելու վերաբերյալ դատախազության կողմից ներկայացված միջնորդությունները, սակայն ինքնին մտահոգիչ է ազատագրված անձանց տրամադրված խրախուսանքների թիվը:

Քրեակատարողական ծառայության տարեկան հաշվետվությունից պարզ է դառնում, որ 2023 թվականի համեմատությամբ 2024 թվականին կազմակերպվել է 146-ով կամ 150 տոկոսով ավել վերասոցիալականացման միջոցառում, որին 2023 թվականի համեմատությամբ մասնակցել է 4754-ով կամ 220 տոկոսով ավել ազատագրված անձ: 2023 թվականի համեմատությամբ 40-ով ավելացել է նաև աշխատանքային զբաղվածության մեջ ընդգրկված դատապարտյալների թիվը՝ կազմելով 420 անձ կամ ազատագրված անձանց ընդհանուր թվի 34 տոկոսը: Նշված ցուցանիշները համեմատելով տրամադրված խրախուսանքների թվի հետ՝ կարող են եզրակացնել, որ գործուն քայլեր չեն ձեռնարկվել վերասոցիալականացման ծրագրերին ակտիվ մասնակցություն ունեցած դատապարտյալներին խրախուսելու համար: Ավելին, քրեակատարողական համակարգում շարունակել է գերակայել պատժողական մոտեցումը: 2023 թվականի համեմատությամբ 2024 թվականին տրամադրված խրախուսանքները նվազել են 2-ով: Բացի այդ, ազատագրված անձանց առավել հաճախ կարգապահական տույժի են ենթարկել, քան թե խրախուսել, ինչը հստակ ձևով արտացոլված է պաշտոնական վիճակագրության մեջ:

2024 թվականին 1901 կալանավորված անձի և դատապարտյալի նկատմամբ կիրառվել է 2539 կարգապահական տույժի միջոց, որը 530-ով ավել է 2023 թվականին տրամադրված կարգապահական տույժի միջոցներից: Քրեակատարողական ծառայության տրամադրված վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու տարում մեծամասամբ կիրառվել է

«պատժախուց» տեսակի կարգապահական տույժի միջոցը՝ 1042: «Նկատողություն» և «նախազգուշացում» տեսակի կարգապահական տույժ միջոցների թիվը կազմել է համապատասխանաբար 1205 և 90: 134 դեպքում անձանց զրկել են հեռախոսազանգի և տեսազանգի իրավունքից, 68 դեպքում՝ տեսակցության իրավունքից: Պատկերն ըստ քրեակատարողական հիմնարկների հետևյալն է.

«Արմավիր» ՔԿՀ-ում կիրառվել է 1212 կարգապահական տույժ.

- 562 նկատողություն
- 498 պատժախուց
- 80 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում
- 45 տեսակցության իրավունքից զրկում
- 27 նախազգուշացում

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում կիրառվել է 443 կարգապահական տույժ.

- 273 նկատողություն
- 90 պատժախուց
- 36 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում
- 30 նախազգուշացում
- 14 տեսակցության իրավունքից զրկում

«Վանաձոր» ՔԿՀ-ում կիրառվել է 222 կարգապահական տույժ.

- 137 պատժախուց
- 72 նկատողություն
- 7 նախազգուշացում
- 4 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում
- 2 տեսակցության իրավունքից զրկում

«Սևան» ՔԿՀ-ում կիրառվել է 199 կարգապահական տույժ.

- 100 պատժախուց
- 86 նկատողություն
- 11 նախազգուշացում
- 1 տեսակցության իրավունքից զրկում
- 1 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում

«Արթիկ» ՔԿՀ-ում կիրառվել է 144 կարգապահական տույժ.

- 82 նկատողություն
- 57 պատժախուց
- 3 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում
- 2 նախազգուշացում

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում կիրառվել է 101 կարգապահական տույժ.

- 67 պատժախուց
- 32 նկատողություն
- 2 նախազգուշացում

«Գորիս» ՔԿՀ-ում կիրառվել է 86 կարգապահական տույժ.

- 37 պատժախուց
- 37 նկատողություն
- 6 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում
- 4 նախազգուշացում
- 2 տեսակցության իրավունքից զրկում

«Վարդաշեն» ՔԿՀ-ում կիրառվել է 80 կարգապահական տույժ.

- 42 նկատողություն
- 30 պատժախուց

- 6 նախագրուչացում
- 1 տեսակցության իրավունքից զրկում
- 1 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում

«Աբովյան» ՔԿՀ-ում կիրառվել է 46 կարգապահական տույժ.

- 22 պատժախուց
- 17 նկատողություն
- 3 տեսակցության իրավունքից զրկում
- 3 հեռախոսազանգից և տեսազանգի հնարավորությունից զրկում
- 1 նախագրուչացում

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում կիրառվել է 6 կարգապահական տույժ.

- 4 պատժախուց
- 2 նկատողություն

Ինչպես տեսնում, ամենից շատ կարգապահական տույժերը կիրառվել են «Արմավիր» (1212) և «Նուբարաշեն» (443), այնուհետև՝ «Վանաձոր» (222), «Սևան» (199), «Արթիկ» (144), «Դատապարտյալների հիվանդանոց» (101), «Գորիս» (86), «Վարդաշեն» (80), «Աբովյան» (46) և «Երևան-Կենտրոն» (6) ՔԿՀ-ներում: Առավել հաճախ կիրառված կարգապահական տույժի տեսակը նկատողությունն է, որն ամենից շատ կիրառվել է «Արմավիր» (562) և «Նուբարաշեն» (273), այնուհետև՝ «Սևան» (86), «Արթիկ» (82), «Վանաձոր» (72), «Վարդաշեն» (42), «Գորիս» (37), «Դատապարտյալների հիվանդանոց» (32), «Աբովյան» (17) և «Երևան-Կենտրոն» (2) ՔԿՀ-ներում: «Պատժախուց» տեսակի կարգապահական տույժը ամենից շատ կիրառվել է «Արմավիր» (498), այնուհետև՝ «Վանաձոր» (137), «Սևան» (100), «Նուբարաշեն» (90), «Դատապարտյալների հիվանդանոց» (67), «Արթիկ» (57), «Գորիս» (37), «Վարդաշեն» (30), «Աբովյան» (22) և «Երևան-Կենտրոն» (4) ՔԿՀ-ներում: Հեռախոսակապից և տեսազանգի իրավունքից անձանց առավել հաճախ զրկել են «Արմավիր» (80) և «Նուբարաշեն» (36), այնուհետև՝ «Գորիս» (6), «Վանաձոր» (4), «Աբովյան» (3), «Արթիկ» (3), «Սևան» (1) և «Վարդաշեն» (1) ՔԿՀ-ներում: «Դատապարտյալների հիվանդանոց» և «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ներում պահվող անձանց նկատմամբ կարգապահական տույժի նշված միջոցը չի կիրառվել: Նախագրուչացում ամենից շատ տրվել է «Նուբարաշեն» (30) և «Արմավիր» (27), այնուհետև՝ «Սևան» (11), «Վանաձոր» (7), «Վարդաշեն» (6), «Գորիս» (4), «Արթիկ» (2), «Դատապարտյալների հիվանդանոց» (2) և «Աբովյան» (1) ՔԿՀ-ներում պահվող անձանց: Այն չի կիրառվել «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում: Իսկ տեսակցության իրավունքից առավել հաճախ զրկվել են «Արմավիր» (45) և «Նուբարաշեն» (14), այնուհետև՝ «Աբովյան» (3), «Վանաձոր» (2), «Գորիս» (2), «Վարդաշեն» (1) և «Սևան» (1) ՔԿՀ-ներում պահվող անձինք: Կարգապահական տույժի նշված միջոցը չի կիրառվել «Արթիկ», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ներում:

Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ «Արթիկ», «Գորիս», «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն», «Վանաձոր» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում պահվող անձանց նկատմամբ կիրառված տույժերը չեն բողոքարկվել: «Աբովյան» ՔԿՀ-ում ազատագրված 1 անձի կողմից տույժի որոշումը բողոքարկվել է ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որը ներկայումս քննման փուլում է: «Արմավիր» ՔԿՀ-ում կիրառված տույժերից 3-ը բողոքարկվել է դատական կարգով, որից 2 տույժ թողնվել է անփոփոխ, 1 տույժ կասեցվել է: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 1 դատապարտյալի պատժախուց տեղափոխելու վերաբերյալ կայացված որոշումը բողոքարկվել է Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն և ներկայումս ընթացքի մեջ է: 1 դատապարտյալի «նախագրուչացում» տույժի վերաբերյալ կայացված որոշումը նույնպես բողոքարկվել է Գլխավոր դատախազության վերը նշված վարչություն և մերժվել է:

«Սևան» ՔԿՀ-ում կիրառված տույժերից 2-ը բողոքարկվել է դատական կարգով, որոնցից 1-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել: 1 կարգապահական տույժ վերադասության կարգով բողոքարկվել է Արդարադատության նախարարին, սակայն ներկայացված բողոքը մերժվել է:

«Արթվան», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ներում պահվող անձանց նկատմամբ կիրառված տույժերը կասեցնելու և վերանայելու պահանջով Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության կողմից միջնորդություն չի ներկայացվել: Քրեակատարողական մյուս հիմնարկներում նշված վարչության կողմից ներկայացված միջնորդությունների վիճակագրությունը հետևյալն է:

- «Արթիկ» ՔԿՀ-ում կիրառված տույժերից մեկը բողոքարկվել է վերանայելու պահանջով և բավարարվել է:
- «Արմավիր» ՔԿՀ-ում ներկայացվել է տույժերը վերանայելու վերաբերյալ 11 միջնորդություն, որոնցից 1-ը թողնվել է անփոփոխ, 7-ը վերանայվել է, 3-ը հանվել է:
- «Գորիս» ՔԿՀ-ում տույժերը վերանայելու պահանջով 4 անգամ միջնորդություն է ներկայացվել, որից 2-ը մերժվել է, 2-ը՝ բավարարվել:
- «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կիրառված տույժը վերանայելու պահանջով միջնորդություն է ներկայացվել, որը բավարարվել է «նախագուշացում» տեսակի տույժի փոխարեն կիրառվել է «նկատողություն» տույժի տեսակը: Մեկ այլ դեպքում նույնպես կիրառված տույժը վերանայելու պահանջով ներկայացված միջնորդությունը բավարարվել է, ինչի արդյունքում դատապարտյալը համարվել է «չարամիտ խախտող»:
- «Սևան» ՔԿՀ-ում կիրառված կարգապահական տույժի տեսակները վերանայելու պահանջով 2 միջնորդություն է ներկայացվել, որոնք բավարարվել են, և «նկատողություն» կարգապահական տույժերի տեսակը փոխարինվել է «նախագուշացում» կարգապահական տույժերի տեսակով:
- «Վանաձոր» ՔԿՀ-ում կայացված տույժի որոշումները կասեցնելու կամ վերանայելու պահանջով 3 միջնորդություն է ներկայացվել, որից բավարարվել է 2-ը:
- «Վարդաշեն» ՔԿՀ-ում կայացված տույժի որոշումները վերանայելու պահանջով 1 միջնորդություն է ներկայացվել, որը բավարարվել է, և «նախագուշացումը» փոխարինվել է «նկատողություն» կարգապահական տույժով:

Այսպիսով, Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ կայացված որոշումները վերանայելու կամ կասեցնելու պահանջով հաշվետու տարում Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության կողմից 24 միջնորդություն է ներկայացվել, որից 4-ը մերժվել է, 20-ը՝ բավարարվել: Ընդ որում, բավարարված 20 միջնորդության արդյունքում 3 կարգապահական տույժ հանվել է, 2 դեպքում կարգապահական տույժի տեսակը փոխարինվել է կարգապահական տույժի ավելի մեղմ տեսակով: Իսկ մնացած 15 դեպքում ստացվում է, որ ներկայացված միջնորդության արդյունքում կիրառված կարգապահական տույժի տեսակները փոխարինվել են ավելի խիստ տեսակներով: Իհարկե, անհրաժեշտ է ուսումնասիրել կիրառված տույժերի համաչափ լինելն անձանց կողմից կատարված արարքին, ինչի համատեքստում միայն հնարավոր կլինի հասկանալ դատախազության կողմից ներկայացված միջնորդությունների համաչափությունը: Այնուամենայնիվ, զուտ վիճակագրության թվային ուսումնասիրությունը փաստում է, որ դատախազության կողմից ներկայացված միջնորդությունները, որպես այդպիսին, պատժիչ բնույթ են կրել, և դրանց բավարարման արդյունքում անձանց նկատմամբ կարգապահական տույժի ավելի խիստ տեսակներ են կիրառվել: